

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ*

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
2010-2015թթ.

ՎԱՆԱԶՈՐ, 2010թ.

I. Մուտք. Ինստիտուտի զարգացման տեսլականը, առաքելությունը

ձգտել հասնելու այն բանին, որ 2015 թվականին Ինստիտուտը դառնա Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում միջազգային չափանիշներին բավարարող բարձրորակ մասնագետներ պատրաստող, գիտական հետազոտություններ, մշակումներ իրականացնող, սոցիալ-մշակութային և լուսավորական արդյունավետ գործունեություն իրականացնող առաջադեմ հաստատություն:

Այս տեսլականի ներքո իրականացվելիք առաքելությունները՝

1. ձևավորել Ինստիտուտի կայուն զարգացումն ապահովող համակարգ,
2. ձևավորել միասնական մոտեցում Ինստիտուտի՝ Եվրոպական միացյալ կրթական տարածքում ներգրավվելու, 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելու և նույնական պատասխան տալու, ապագա մարդ-քաղաքացու կրթության և դաստիարակության խնդիրները պատշաճ կերպով լուծելու նպատակով:
3. աջակցել արհեստավարժ, սոցիալապես ինքնահաստատված քաղաքացու կայացմանը, որն ի գորու է ակտիվ մասնակցություն ունենալ Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական խնդիրների լուծմանը, ժողովրդավարական հասարակարգի կայացմանը:

II. Ընդհանուր դրույթներ

1. Ինստիտուտի գործունեության վերլուծություն

Ինստիտուտը Հայաստանի Հանրապետության հյուսիսային տարածաշրջանի կրթության, գիտության և մշակույթի կենտրոն է: Այն հիմնադրվել է 1969թ.: Վանաձոր (նախկինում՝ Կիրովական) քաղաքի և Հայաստանի հյուսիսային շրջանների կրթական հաստատությունները մանկավարժական կադրերով ապահովելու նպատակով՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1969թ հուլիսի 9-ի որոշմամբ Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը վերանվանվել է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ: Իր քառասնամյա պատմության ընթացքում ինստիտուտը պատրաստել է բարձր որակավորում ունեցող մեծ թվով մասնագետներ: Ինստիտուտի շրջանավարտների թվում կան Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս հայտնի գիտության դոկտորներ և թեկնածուներ, կրթության ոլորտի՝ բարձր որակավորում ունեցող մասնագետներ, կուլտուրայի և սպորտի գործիչներ, օլիմպիական և աշխարհի չեմպիոններ, գործարարներ, քաղաքական գործիչներ:

Ինստիտուտը ձևավորվել է հեռակա մանկավարժական ինստիտուտի հենքի վրա և ժառանգել է նրա նյութատեխնիկական բազան՝ անհրաժեշտ գույքը, լաբորատոր սարքավորումը, 110 հազար կտոր գիրք ունեցող գրադարանը՝ իր հնատիպ և հազվագյուտ գրքերով:

Ինստիտուտի գործունեության առաջին տարիներից մինչ օրս գործում են հինգ ֆակուլտետներ՝ պատմաշխարհագրական, բանասիրական, մանկավարժության, ֆիզիկամաթեմատիկական, կենսաբանաքիմիական: Բացի ավանդական մասնագիտություններից (“Հայոց լեզու և գրականություն”, “Տարրական ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա”, “Պատմություն”, “Մաթեմատիկա”, “Ֆիզիկա”, “Կենսաբանություն”)՝ ներկայումս կրթությունը իրականացվում է բակալավրի հիմնական կրթական ծրագրի 30-ից ավելի մասնագիտություններով, որոնցից 20-ը ոչ խիստ մանկավարժական ուղղվածություն ունեն (“Լրագրություն”, “Սոցիալական մանկավարժություն”, “Նախագորակոչային պատրաստվածություն և ֆիզիկական կուլտուրա”, “Թարգմանչական գործ”, “Սոցիալական աշխատանք”, “Մշակութաբանություն”, “Սոցիալ-մշակութային գործունեություն” (կառավարում, մենեջմենտ), “Դեղագործական քիմիա”, “Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա”, “Կառավարում”), ինչը պայմանավորված է աշխատաշուկայի պահանջներով: Սկսած 2008թ.-ից՝ ներդրված է մագիստրոսական կրթության համակարգը՝ 10 մասնագիտությունների ուղղությամբ:

Մերնդափոխությունն ապահովելու նպատակով 2006թ.-ից Ինստիտուտում գործում է ասպիրանտուրա:

Նոր ստորաբաժանումներից է հենակետային վարժարանը՝ հումանիտար, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերով: Ինստիտուտում մշտապես կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ՝ բուհ ընդունվողների համար:

Վերջին չորս տարիների ընթացքում Ինստիտուտում իրականացվում են լայնածավալ կրթական բարեփոխումներ, որոնց վերջնական նպատակը 21-րդ դարի մարտահրավերներին համապատասխանող որակյալ կրթության ապահովումն է: Անցկացվող բարեփոխումներն իրենց բովանդակությամբ համապատասխանում են Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքներին, որոնք մեր երկիրը որդեգրել է՝ սկսած 2005թ.-ին այդ գործընթացի անդամ դառնալուց հետո և ներառում են բուհական

կյանքի տարբեր կողմերը (ինստիտուտի կառուցվածք, ներքին իրավական դաշտ, կրթական գործընթաց, գիտական և տեխնիկական նորարարություններ, ֆինանսատնտեսական, արտատուումնական, իրազեկման ոլորտներ և արտաքին քաղաքականություն):

Կրթական բարեփոխումների նպատակն է նաև վեր հանել ու շտկել առկա թերությունները, անցկացնել որակական փոփոխություններ՝ կապված աշխատաշուկայի և սոցիալական պատվերի պահանջների հետ:

Ինստիտուտում գործող 5 ֆակուլտետները սպասարկվում են 22 ամբիոնների կողմից, առկա և հեռակա բաժիններում սովորող ուսանողների թիվը հասնում է 5000-ի: Ինստիտուտում դասավանդող մոտ 300 դասախոսներից 50.5%-ը ունի գիտական աստիճան կամ կոչում:

Գիտական կոչում և/կամ գիտական աստիճան ունեցող դասախոսների հարաբերակցությունը ընդհանուրի նկատմամբ կազմում է, համապատասխանաբար, 57 և 43%: Դասախոսների 58%-ի տարիքը բարձր է 50 տարեկանից, մինչև 30 տարեկան դասախոսները կազմում են 3%:

Վերջին տարիների ընթացքում նկատվում է գիտական գործունեության աշխուժացում: Անցկացվել են մեծաթիվ հանրապետական և միջբուհական գիտական կոնֆերանսներ, միայն վերջին տարվա ընթացքում տեղի է ունեցել 8 գիտական կոնֆերանս, այդ թվում նաև երիտասարդ գիտնականների և ուսանողական գիտական ընկերության: Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների կողմից պաշտպանվել են դոկտորական, թեկնածուական թեզեր, լույս են տեսել բազմաթիվ մենագրություններ և գիտական հոդվածներ:

Ծավալուն աշխատանք են իրականացնում Ստ. Զորյանի (2007թ.) և Հովհ.Թումանյանի (2008, գ.Դսեղ) տուն-թանգարաններում գործող Ինստիտուտի գիտական խմբերը: Ինստիտուտում ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների խթանման և բարելավման նպատակով ստեղծվել են առարկայական կաբինետներ, անհրաժեշտ սարքավորումներով հագեցած հետազոտական համալիր լաբորատորիա, ժամանակակից համակարգիչներով և այլ տեխնիկական միջոցներով հագեցած ՀՀ և ՌԴ ակադեմիկոս Ս.Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնը: Ձեռքբերումներ կան նաև տնտեսական և նյութատեխնիկական ոլորտներում՝ հիմնանորոգվել է արվեստի բաժնի կիսաքանդ մասնաշենքը, ինչը նպաստավոր

պայմաններ է ստեղծել ապագա երաժշտության և նկարչության ուսուցիչների ուսման և ստեղծագործելու համար: Ինստիտուտի աշխատակիցների և ուսանողության ֆիզիկական առողջության պահպանման նպատակով գործում են մարմնակրթության դահլիճը, մարզահրապարակը, հրաձգարանը: Շուտով շահագործման կհանձնվի Բագում գյուղում տեղակայված Ինստիտուտի մարզաառողջարարական համալիրը, որտեղ ստեղծված են բոլոր պայմանները ուսանողների և աշխատակիցների գիտաուսումնական գործունեության, սպորտային մարզումների և հանգստի համար:

2. Ինստիտուտի կրթական ծառայությունները

Ինստիտուտը կրթական ծառայություններ է մատուցում տարածաշրջանային և հանրապետական մակարդակներով՝ համաձայն բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների՝ ուսուցման առկա և հեռակա ձևերով, պետական կրթական պատվերի շրջանակներում և վճարովի հիմունքներով: Շարունակական կրթության սահմաններում բուհն իրականացնում է քառաստիճան ուսուցում՝ ավագ դպրոց - բակալավրիատ-մագիստրատուրա և ասպիրանտուրա: Ցկյանս կրթության իրականացման նպատակով այստեղ կազմակերպվում են. հետբուհական կրթության, ավագ դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման, բուհ ընդունվողների նախապատրաստական դասընթացներ:

3. Մրցակցային դիրքի գնահատումը կրթական ծառայությունների շուկայում

Այսօր Ինստիտուտը կրթական ծառայություններ է մատուցում բարձր մրցակցության դաշտում: Հյուսիսային տարածաշրջանում գործում են մի շարք խոշոր պետական և ոչ պետական բուհեր: Այս պայմաններում Ինստիտուտը կարողանում է ապահովել առաջնային դիրքեր ոչ միայն մանկավարժական կադրերի, այլ նաև աշխատաշուկայի պահանջները բավարարող այլ մասնագետների պատրաստման բնագավառում: Բուհը լրիվ ապահովում է Վանաձորը և Լոռու մարզը ուսուցչական կադրերով՝ ամեն տարի թողարկելով 1000-ից ավելի բակալավրեր և մագիստրոսներ:

4. Կրթական ծառայությունների որակի նկատմամբ ներկայացվող հիմնական

պահանջները

Ինստիտուտի կրթական ծառայությունների որակի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են բակալավրի, մասնագետի և մագիստրոսների պատրաստման Պետական կրթական չափորոշիչներով: Մասնագիտությունների չափորոշիչներում ամրագրված են ընդհանուր մասնագիտական, մասնագիտական արհեստավարժական որակներին, կրթական հաստատությունների կառավարմանը, ընդհանուր մանկավարժահոգեբանական և մասնագիտացման բնագավառի գիտելիքների ձեռքբերմանը և խորացմանը, մասնագիտական գործնական աշխատանք կատարելու, գիտահետազոտական աշխատանք իրականացնելու հմտություն, կարողություն և կոմպետենտություն ձեռքբերելուն ներկայացվող պահանջները: Հետագայում ընդհանուր պահանջներն ավելի առարկայական ձևով ներկայացվում են աշխատանքային ուսումնական ծրագրերում:

Իր կրթական գործունեության բնագավառում Ինստիտուտը մասնագետների պատրաստման գործում ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով.

- Ինստիտուտի կրթական գործունեությունը պետք է ուղղված լինի փոփոխվող միջավայրին արագ հարմարվելու ընդունակություն, ճիշտ կառավարչական որոշումներ ընդունելու կարողություն, համակարգային կառավարման հմտություններ և ժամանակակից սարքավորումների օգտագործման կարողություններ ունեցող մասնագետի պատրաստմանը,

- բակալավրերի, մագիստրոսների և ասպիրանտների պատրաստումը պետք է իրականացվի ուսուցման նորարարական մեթոդների կիրառման, ժամանակակից արդյունավետ մեթոդների վրա հիմնված ուսուցման տեխնոլոգիաների և հատուկ միջոցների օգտագործման հիման վրա՝ ուսանողների մոտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների, ռուսաց և օտար լեզուների իմացության բավարար մակարդակի ապահովման նպատակով,

- Ինստիտուտի շրջանավարտը պետք է ունենա այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, սերը իր հայրենիքի նկատմամբ, հարգանք պետական խորհրդանիշների, ազգային ավանդույթների նկատմամբ, անհանդուրժողական վերաբերմունք ցանկացած հակասահմանադրական և հակահասարակական դրսևորումների նկատմամբ, բարոյական բարձր հատկանիշներ:

- Ինստիտուտի՝ մասնագետների պատրաստմանն ուղղված գործունեությունը պետք է նպաստի ուսանողների մոտ անձի ստեղծագործական, հոգևոր և ֆիզիկական հնարավորությունների զարգացմանը, բարոյականության, առողջ կենսակերպի ամուր հիմքերի ձևավորմանը, հանրապետության հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին մանակից լինելու պահանջմունքի ձևավորմանը:

- Ինստիտուտի դաստիարակչական գործունեությունը պետք է ուղղված լինի անհատի՝ իր իրավունքների և պարտականությունների նկատմամբ գիտակցված վերաբերմունքի կայացմանը, համաշխարհային և հայրենական մշակույթի ձեռքբերումներին հաղորդակից լինելուն, Հայաստանի պատմության, սովորույթների և ավանդույթների, հայերենի՝ որպես պետական լեզվի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ձևավորմանը:

5. Ինստիտուտի ներկա վիճակի գնահատականը

Ինստիտուտի գործունեությունը նպատակաուղղված է ժամանակակից պահանջներին բավարարող որակյալ կրթության ապահովմանը:

Ինստիտուտի գործունեությունը նորարարական կրթական տեղեկատվական տեխնոլոգիաների, հարուստ մանկավարժական փորձի, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի և կառավարման ժամանակակից ոճի համադրումն է: Ներկայումս Ինստիտուտի գործունեության հիմնական ձեռքբերումը բոլոր մասնագիտությունների համար ուսուցման կրեդիտային համակարգի ներդրումն է, ինչը բխում է Բոլոնյան գործընթացի սկզբունքներից: Ուսումնական գործընթացի բարեփոխման շրջանակներում ձևավորվել է նոր նորմատիվային բազա՝ կրթական ծրագրեր, կանոնակարգեր, ընթացակարգեր, ուսանողների գիտելիքների գնահատման բալային-ռեյթինգային համակարգ և այլն:

Ինստիտուտի հատուկ ուղղվածությունը նոր մանկավարժական և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն է: Հիմնական շեշտը դրվում է այդ բնագավառներում դասախոսների որակավորման բարձրացման վրա: Ինստիտուտում մշտապես իրականացվում են աշխատանքներ՝ ուսումնական գործընթացում նորարարական մեթոդների և ձևերի, կրթական ինտերակտիվ մեթոդների ներդրման ուղղությամբ:

Ինստիտուտում ստեղծվում է որակի ապահովման նորարարական համակարգ: Լինելով միջբուհական կոնսորցիումների անդամ՝ Ինստիտուտը Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի Հայաստանի բաժանմունքի ֆինանսական աջակցությամբ մասնակցել է Հայաստանի բուհերում որակի ապահովման ներքին համակարգի շրջանակային մոդելի մշակման և ներդրման աշխատանքներին: Կրթության որակի ապահովման բնագավառում կարևոր նորարարական բաղադրիչը Ինստիտուտի որդեգրած գործընթացային մոտեցումն է: Մշակվել է գործընթացների գնահատման համակարգ, քննարկման փուլում է գտնվում կրթության որակի գնահատման և ապահովման մոդելը, նախապատրաստվում է աշխատանքային խմբերի ձևավորման և նրանց գործառույթների գնահատման կարգը:

Ձևավորվում է որակի և նորարարությունների կորպորատիվ մշակույթ: Դրա հիմնական նպատակը ուսուցման նկատմամբ նոր մոտեցումների օգտագործման փորձի տարածումն է: Կորպորատիվ մշակույթի մաս է կազմում աշխատակիցների խրախուսումը և աջակցումը՝ աշխատանքի նկատմամբ նորարարական և ստեղծագործական մոտեցման դեպքում: Այդ մեթոդներից է պրոֆեսորադասախոսական կազմի՝ ուսումնական տարվա արդյունքներով հաշվարկվող ռեյթինգների գործող համակարգը, որը ներառում է ուսումնական, գիտական և դաստիարակչական աշխատանքներին վերաբերող ցուցանիշներ: Նույն համակարգը պատրաստվում է կիրառել ամբիոնների և ֆակուլտետների նկատմամբ:

Ինստիտուտը գործում է անընդհատ զարգացող մրցակցային միջավայրում: Այդ պատճառով Ինստիտուտի գործունեության կարևորագույն ուղղությունը նրա սպառողների ակնկալիքների, սպասելիքների և պահանջարկի ուսումնասիրումը, գնահատումը և բավարարումն է: Այդ նպատակով Ինստիտուտում ներդրվում է սպառողական մոնիթորինգի համակարգ: Ամեն տարի անցկացվում են հարցումներ՝ ուսանողների և նրանց ծնողների, դասախոսների, աշխատակիցների, շրջանավարտների, գործատուների շրջանում՝ մեր գործունեության որակը որոշելու նպատակով:

Ինստիտուտի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին խոչընդոտները և ներքին հնարավորությունները, ինչպես նաև առանձին ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերով նախանշված կոնկրետ միջոցառումները ներկայացված են SWOT-մատրիցայի տեսքով:

Ուժեղ կողմերը

- Մրցունակության բարձր մակարդակը և բուհի դրական վարկանիշը՝ ՀՀ կրթական ծառայությունների շուկայում
- Մենաշնորհային դիրք տարածաշրջանում մանկավարժության ոլորտի մասնագիտությունների գծով
- Ինստիտուտում ձևավորված ակադեմիական ավանդույթները
- Դինամիկ կերպով զարգացող կայուն ֆինանսական վիճակը
- Նյութատեխնիկական բազայի որոշակի մակարդակը:
- Կրթական ռեսուրսների մշտադիտարկման և կառավարման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակտիվությունը՝ գիտական գրականության հրատարակման գործում
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի որակի գնահատման և բարձր արդյունքների ձեռքբերման համար նյութական խրախուսման համակարգի առկայությունը
- Ուսումնամեթոդական գրականությամբ և տեղեկատվական ռեսուրսներով ապահովվածության բավարար մակարդակ
- Գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող դասախոսների բավարար մակարդակ:

Թույլ կողմերը.

- Ուսանողների թվաքանակի նվազում
- Ինստիտուտի մասնագիտությունների միակողմանի ուղղվածություն, ինչը խոչընդոտում է կրթական գործունեության կազմակերպման նկատմամբ ՀՀ գիտության և կրթության նախարարության և աշխատաշուկայի պահանջների փոփոխման նկատմամբ ճկունության դրսևորումը
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսումնաօժանդակ աշխատակազմի որակավորման բարձրացման համակարգի բացակայություն
- Կիրառական բնույթի արդիական գիտական թեմաների մշակման գործում այլ կազմակերպությունների հետ աշխատելու ռեզերվների թույլ օգտագործում
- Ինստիտուտում որակավորման բարձրացման ֆակուլտետի բացակայություն:

Հնարավորությունները.

- Ուսանողների, դասախոսների ակադեմիական շարժունակության մակարդակի բարձրացում
- Բուհի կառավարման համակարգի կատարելագործում
- Կրթության, գիտության և աշխատաշուկայի ինտեգրման արդյունավետության բարձրացում
- Կրթական գործունեության ընդլայնում և վերափոխում՝ համաձայն գործատուների պահանջների,
- Ինստիտուտի կրթական գործընթացներում կրթության կառավարման և կրթական նորարարական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորություն
- Ուսումնական և կառավարման ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառություն
- Մենաշնորհային դիրքի ապահովում՝ ոչ մանկավարժական մի շարք մասնագիտությունների գծով:

Ուժեղ կողմերն օգտագործելուն ուղղված միջոցառումներ՝ հնարավորությունների ընդլայնման նպատակով

- Գործատուների ներգրավում մրցունակ մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի մշակման գործընթացներում,
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման և վերաորակավորման արդյունավետության գնահատման բազմակողմանի համակարգի ձևավորում,
- Գիտության և կրթության կապի ընդլայնում և խորացում,
- Գրադարանային-տեղեկատվական ցանցի արդիականացում և ընդլայնում,
- Ինտերնետ-կապի հզորության ավելացում,
- Բուհի ինստիտուցիոնալ հավաստագրում և կրթական ծրագրերի հավաստագրման պայմանների ձևավորում,
- Ուսանողների համար կրթական ռեսուրսների և ինքնակրթության տեխնոլոգիաների մատչելիության պայմանների ապահովում:

Ուժեղ կողմերի օգտագործման միջոցառումներ՝ սպառնալիքներից խուսափելու նպատակով

- ՀՀ –ում ինստիտուցիոնալ հավաստագրման ապահովում,

- Ինստիտուտի ռազմավարական ծրագրերին համապատասխանող զարգացում
- Ուսումնական գործընթացում անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործման ապահովում,
- Ոչ նյութական խրախուսման համակարգի զարգացում,
- Աշխատաշուկայի կարիքների մոնիթորինգի համակարգի ստեղծում՝ շրջանավարտներին աշխատաշուկայում կողմնորոշելու նպատակով:

Թույլ կողմերի ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝

սպառնալիքներից խուսափելու նպատակով

- Հարմարվողական կորպորատիվ մշակույթի ձևավորում,
- Շրջանավարտների պատրաստմանն ու մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների ձևերի և մեթոդների ընդլայնում,
- Հասարակայնության համար Ինստիտուտի գործունեության թափանցիկության ապահովում,
- “Բուհ-դպրոց” հետադարձ կապերի ապահովում, զարգացում և ընդլայնում:

6. Ինստիտուտի հիմնական նպատակը և զարգացման առաջնահերթությունները

Ներկայումս ՀՀ բարձրագույն կրթական համակարգի զարգացման միտումները ձևավորվում են հետևյալ գործոնների ազդեցության ներքո.

- կրթական ծառայությունների որակ, շրջանավարտների հմտություններ, ունակություններ, բարձր արհեստավարժություն և հիմնարար գիտելիքների նկատմամբ պահանջների բարձրացում
- Հայաստանի կրթական ծառայությունների շուկայում բուհերի միջև մրցակցության աճ
- կրթության միջազգայնացում:

Վերոհիշյալ միտումներն անհրաժեշտ է դիտարկել բարձրագույն կրթության համակարգում ներկայումս գոյություն ունեցող և լուծում պահանջող խնդիրների հետ փոխկապակցվածության մեջ՝

- աշխատաշուկայի անբավարարվածությունը բարձրագույն կրթության ունեցող մասնագետների որակից,
- բուհերի ժողովրդավարական կառավարման սկզբունքների բացակայություն, հասարակական ինստիտուտների համար բուհերի գործունեության “ոչ

թափանցիկություն”, ինչը համապատասխան օրենսդրական դաշտի բացակայության արդյունք է,

- թույլ կապ կրթության և աշխատաշուկայի միջև,
- մասնագետների պատրաստման և ատեստավորման գործընթացներում գործատուների ներգրավվածության բացակայություն,
- ժամանակակից գիտամանկավարժական կադրերի պատրաստման մեխանիզմների թույլ օգտագործում,
- կատարվող գիտական հետազոտությունների և կիրառական մշակումների ցածր արդյունավետություն,
- կրթական ծրագրերի միջազգային հավաստագրման և բուհերի ինստիտուցիոնալ հավաստագրման բացակայություն,
- ուսանողների և դասախոսների շարժունության ցածր մակարդակ:

Այսօր Ինստիտուտի ռազմավարությունն նպատակաուղղված է կրթական ծառայությունների մատուցման որակի համապատասխանեցմանը միջազգային չափորոշիչներին: Այս տեսանկյունից Ինստիտուտն այսօր ծավալում է իր գործունեությունը՝ կրթական գործընթացի բարեփոխումը համաձայն Բոլոնյան հռչակագրի սկզբունքների:

Հաշվի առնելով ՀՀ բարձրագույն կրթության համակարգի զարգացման միտումները, առկա խնդիրների լուծման անհրաժեշտությունը, SWOT վերլուծության արդյունքները՝ Ինստիտուտի 2010-2015 թթ. զարգացման նպատակը և խնդիրներն են՝

- կրթական նորագույն տեխնոլոգիաների զարգացումն ու կատարելագործումը
- Ինստիտուտի կրթական ծրագրերի ինստիտուցիոնալ և մասնագիտական հավաստագրման ապահովումը
- տեղեկատվական տեխնոլոգիաների դերի բարձրացումը և ուսումնամեթոդական հենքի կատարելագործումը՝ համաշխարհային միտումներին համապատասխան
- սովորողների ինքնուրույն աշխատանքի դերի բարձրացումը ուսումնական ռեսուրսների և ինքնակրթության տեխնոլոգիաների մատչելիության պայմանների ապահովման միջոցով

- կրթության որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործումը՝ ելնելով արտաքին գնահատման սկզբունքներից և չափորոշիչներից
- կրթական գործունեության թափանցիկության ապահովումը՝ կրթական գործընթացում գործատուների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավվածության ապահովման միջոցով
- գիտական և մանկավարժական բարձրակարգ կադրերի պատրաստումը մագիստրատուրայում և ասպիրանտուրայում,
- բուհական գիտության հետագա զարգացումը և կապերի ամրապնդումը ակադեմիական գիտության հետ
- ուսանողների դաստիարակվածության, կրթվածության, արհեստավարժության դերի բարձրացումը, համամարդկային արժեքների կարևորումը և դաստիարակումը
- ընդհանուր քաղաքական, իրավական և կորպորատիվ մշակույթի ձևավորումը
- ինստիտուտի վարկանիշի բարձրացումը:

IV ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով Ինստիտուտի գործունեության վերլուծության արդյունքները՝ նախատեսվում է սկսել հասարակության արդի պահանջներին և եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծառայությունների և ինտեգրված ծրագրերի ելքային կոմպետենցիաների վրա հիմնված բովանդակային և կառուցվածքային նորացման փուլային գործընթաց՝ այն կողմնորոշելով դեպի ուսուցման ուսանողակենտրոն համակարգի ստեղծմանը:

Ինստիտուտի 2010-2015 թթ ռազմավարության նպատակն է՝ Ինստիտուտի դիրքերի պահպանումն ու ամրապնդումը՝ որպես բարձրագույն կրթության մասնագետների վերապատրաստման, որակավորման բարձրացման և գիտամանկավարժական կադրերի պատրաստման կենտրոն:

1.1. Կրթական գործունեության զարգացման ռազմավարություն

2010-2015թթ. Ինստիտուտի կրթական գործունեության զարգացումը սահմանող հիմնական գործոններն են՝

- երկրի հասարակական-տնտեսական պայմանները,
- գիտության և արտադրության կառուցվածքային վերափոխումը,
- տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ինտենսիվ զարգացումը,
- ինտելեկտուալ և կրթական ծառայությունների աշխատաշուկայի բարեփոխումները,
- բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի արդիականացումը,
- Հայաստանի Հանրապետության ներգրավումը Բոլոնյան գործընթացում:

Նշված գործոնները պահանջում են Ինստիտուտի կրթական գործունեության զարգացման նոր ռազմավարության մշակում, որի էությունը բուհում կրթական միջավայրի ստեղծումն է՝ ուղղված աշխատաշուկայում մրցունակ, արհեստավարժ, պատասխանատու բարձրակարգ մասնագետների պատրաստմանը:

2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտում խթանվում և զարգանում է որակի մշակույթը: Ինստիտուտի գործունեության հիմնական նպատակներից է կրթության որակի ապահովումը: Ինստիտուտի կրթության որակի ապահովման, կառավարման և մշտադիտարկման խնդիրներով զբաղվում է կրթության որակի ապահովման կենտրոնը: Մշակվել են որակի ապահովման ներբուհական համակարգի հիմնարար դրույթները՝ որակի ապահովման հայեցակարգը, կանոնակարգը, կրթական ծառայությունների որակի ապահովման հայեցակարգը, կանոնակարգը:

Կրթական ծառայությունների ոլորտում որակի ապահովման խնդրի արդիականությունը պայմանավորված է գործընթացներով, որոնք այսօր տեղի են ունենում ՀՀ բարձրագույն կրթության համակարգում, այն է.

- Բոլոնյան գործընթացի հիմնադրույթների զարգացումը և դրանց իրականացման խթանումը և ուղղորդումը դեպի կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչները,
- բուհերի և կրթական ծրագրերի միջազգային հավաստագրման գործընթացների զարգացումը,
- կրթական ծառայությունների նկատմամբ շահագրգիռ կողմերի պահանջների բարձրացումը,
- ուսումնական հաստատությունների կառավարման համակարգերի բարեփոխումները համաձայն նոր պահանջների:

Վերոհիշյալ գործընթացները հիմք են հանդիսանում կրթության որակի ապահովման ոլորտում Ինստիտուտի զարգացման ռազմավարական ուղղությունների և համապատասխան ռազմավարական ծրագրերի մշակման համար, որոնց հիմնական նպատակը կրթության որակի ապահովման ներքին համակարգի ձևավորումն է:

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտը բացի կրթական գործունեությունից, իրականացնում է նաև գիտահետազոտական գործունեություն, որի հիմնական նպատակն է.

- ապահովել գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճ,
- ապահովել երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ, և իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդափոխություն,
- ապահովել հայափտության ոլորտի առաջնային զարգացումը,

Ինստիտուտում գործում են գիտահետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ, որոնք օգտագործվում են ինչպես ուսումնական, այնպես էլ գիտահետազոտական նպատակներով: Ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքը սերտորեն կապված է կրթական գործունեության հետ. ամեն տարի մեծանում է այն ուսանողների քանակը, որոնք ներգրավված են գիտահետազոտական աշխատանքներում: Ուսանողները մասնակցում են գիտահետազոտական կոնֆերանսներին, սեմինարներին, մրցույթներին, որոնք անցկացվում են ինչպես

բուհում, այնպես էլ հանրապետական մակարդակով: Գիտաժողովներում ուսանողների ներկայացված զեկուցումները հրատարակվում են ուսանողական աշխատանքների ամենամյա ժողովածուի մեջ:

Ինստիտուտի գիտական գործունեությունը խթանող բաղադրիչներն են՝

- գիտամեթոդական միջոցառումների անցկացում, գիտական աշխատանքների ժողովասածուների հրատարակում,
- մասնակցություն հանրապետական գիտամեթոդական ցուցահանդեսներին և կոնֆերանսներին,
- աշխատակիցների գիտական գործունեությունների իրականացում:

Մշակվել է Ինստիտուտի ֆակուլտետների և ամբիոնների գիտական գործունեության համալիր վարկանշային համակարգ, որը հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել Ինստիտուտի ենթակառույցներում գիտահետազոտական աշխատանքների վիճակը:

Ինստիտուտում անցկացվող հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքներն իրենց արտացոլումն են գտնում հրատարակված մենագրություններում, գիտական հավաքածուներում, առանձին հոդվածներում և հեղինակային իրավունքի ու ինտելեկտուալ սեփականության այլ նյութերում:

Այսօր տնտեսության զարգացման բարձր տեմպերը պահանջում են գիտության զարգացման և կրթության համակարգի արագ և պատշաճ արդիականացում:

Մինչև 2015թ. ընկած ժամանակահատվածում Ինստիտուտի գիտական հետազոտությունների զարգացման հիմնական պահանջներն են՝ գիտական հետազոտությունների և մշակումների հավասարակշռված և հաստատուն զարգացումը, ինչը կապահովի հանրապետական և համաշխարհային շուկայում մրցունակ գիտելիքների ընդլայնված վերարտադրում: Անհրաժեշտ է ապահովել երկրի նորարարական կայուն զարգացման համար անհրաժեշտ գիտելիքների ստացումը, մշակումը և փոխանցումը, ինչպես նաև բարձրացնել գիտական հետազոտությունների որակը:

Որպես Ինստիտուտի ֆունդամենտալ և կիրառական հետազոտությունների ոլորտի ռազմավարության զարգացմանն ուղեկցող արդյունք՝ պահանջվում է մագիստրատուրայի և ասպիրանտուրայի աշխատանքների արդյունավետության բարձրացում, հանրապետական ու միջազգային մակարդակով գիտամեթոդական

միջոցառումների կազմակերպում և անցկացում, արդյունքների հրատարակում: Գիտության և կրթության միջև արդյունավետ կապի ապահովումը Ինստիտուտի գիտական ոլորտի զարգացման պարտադիր պայմաններից է:

Անհրաժեշտ է իրականացնել երիտասարդ գիտական կադրերի աշխատանքը խթանող և ընդլայնող տնտեսական-կառավարչական մեխանիզմների մշակման և կատարելագործման, գիտության ոլորտում Ինստիտուտի ֆակուլտետներին և ամբիոններին աջակցության քաղաքականություն:

Գիտական գործունեության հիմնական ուղղությունները.

1. Մանկավարժական գիտության զարգացման խթանում

Ռազմավարական ուղղությունները.

- բուհական և ակադեմիական գիտությունների համագործակցություն,
- հանրակրթության մանկավարժական ժամանակակից խնդիրներին նվիրված հետազոտությունների ակտիվացում,
- միջին մասնագիտական կրթության կազմակերպման, կառավարման խնդիրներին նվիրված հետազոտությունների ակտիվացում,
- մանկավարժության տեսության, կրթության և մանկավարժական մտքի պատմության, գործնական մանկավարժության, սոցիալական մանկավարժության ուղղություններով տարվող գիտահետազոտական ուսումնասիրությունների առաջնայնության ամրագրում,
- դասընթացների առարկայական մեթոդիկաների տեսության և պրակտիկայի խնդիրների ճշտում և դրվածքի բարեփոխում,
- ուսումնամեթոդական, գիտամեթոդական ձեռնարկների ստեղծում:

2. Գիտահետազոտական գործունեության նպաստավոր պայմանների ստեղծում

Ռազմավարական ուղղությունները.

- գիտահետազոտական կենտրոնի ստեղծում,
- պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության որակի բարձրացում, նպաստավոր պայմանների ստեղծում,
- գիտական աշխատանքների խրախուսման ներբուհական հիմնադրամի ստեղծում,
- գիտական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում,

- բուհի գիտական գործունեության ինտեգրում ակադեմիական համակարգ,,
- երիտասարդ գիտական կադրերի աճը խթանող ծրագրերի մշակում,
- հետազոտությունների տպագրման աջակցություն,
- ուսումնահետազոտական լաբորատորիաների նյութատեխնիկական բազայի հարստացում, հնարավորությունների օգտագործման արդյունավետության բարձրացում:

3. Մարզի գիտահետազոտական ուղղություններին ինտեգրում Ռազմավարական ուղղությունները.

- մարզին սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների գիտախորհրդատվական ծառայությունների մատուցում,
- հանրակրթական դպրոցների մանկավարժական անձնակազմի համար խորհրդատվական ծառայությունների կազմակերպում (ակադեմիական գիտություններ):

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտում կրթության և գիտության բնագավառում միջազգային համագործակցությունը կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ և իրականացվում է Հայաստանի կողմից հաստատված միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի հիման վրա՝ համաձայն արտասահմանյան երկրների հետ կնքված պայմանագրերի:

Ինստիտուտի միջազգային գործունեության կարևորագույն խնդիրներից մեկը ինտեգրումն է համաշխարհային կրթական տարածքում: Ներկայումս Ինստիտուտը համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր է ստորագրել ինչպես արտասահմանյան բարձրագույն կրթական հաստատությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ:

Ինստիտուտն ամենօրյա գործունեություն է ծավալում տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, միջազգային կապերի զարգացման և ամրապնդման ուղղությամբ: Ներկայումս Ինստիտուտը համագործակցում է հետևյալ կազմակերպությունների և բուհերի հետ.

- Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ,

- Էքս-Մարսելի համալսարանական մանկավարժական ինստիտուտ, Ֆրանսիա,
- Բամբերգի Օտտո Ֆրիդրիխի անվան համալսարան, Գերմանիա,
- Կոստրոմայի պետական համալսարան և Ռուսաստանի Դաշնության այլ բուհեր,
- Դարմշտադտի կիրառական գիտությունների ավետարանչական համալսարան, Գերմանիա,
- DAAD (Ակադեմիական փոխանակումների գերմանական ծառայություն)
- Tempus,
- IREX (Հետազոտությունների և փոխանակումների միջազգային խորհուրդ),
- Ռուսաստանի Դաշնության բուհեր:

Ինստիտուտի դասախոսներն ու ուսանողներն ունեն հնարավորություն՝ մասնակցելու արտասահմանյան բուհերում անցկացվող միջազգային գիտագործնական կոնֆերանսներին:

Վերջին տասնամյակներում տնտեսական և սոցիալական ոլորտներում տեղի ունեցող արմատական փոփոխությունները, գիտության, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումը որակական նոր խնդիրներ են առաջադրում բարձրագույն կրթության ոլորտին: Բարձրագույն կրթությունն ու գիտությունը դարձել են հասարակական զարգացման համաշխարհային գործոն և դասվում են ազգային ու համաշխարհային առավել կարևոր առաջնահերթությունների թվին, ինչը պահանջում է միջազգային գործունեության իրականացման հենքային սկզբունքների իմացություն: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հետևյալ բաղադրիչներին՝

- ՀՀ օրենսդրական դաշտի հիմունքների իմացություն, այդ թվում՝ բուհերի կողմից միջազգային գործունեության իրականացման, օտարերկրյա աշխատուժի ներգրավման մասին,
- միջազգային իրավունքի հիմունքների, գործընկեր երկրների ազգային առանձնահատկությունների և արտաքին քաղաքականության իմացություն,
- միջմշակութային հարաբերությունների իմացություն,

- հոգեբանության հիմունքների և գործարար շփման ոլորտում միջանձնային հարաբերությունների իմացություն,
- օտար լեզուների իմացություն:

Ինստիտուտի միջազգային գործունեության զարգացման ծրագրի գլխավոր նպատակն է՝

- կրթական ծառայությունների շուկայում մրցունակության ապահովումը ,
- Ինստիտուտի միջազգային հեղինակության բարձացումը՝ որպես ուսումնական և գիտական բարձրակարգ կենտրոնի,
- Ինստիտուտի կրթական և գիտական գործունեության որակի ապահովումը:

5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Երկրի կրթական տարածքի միասնականությանը, համաշխարհային կրթական տարածք դրա ինտեգրմանը նպաստող տեղեկատվական միջավայրի ստեղծման և զարգացման նպատակով բուհում ձեռնարկվել է ուսումնական և օժանդակ ստորաբաժանումների համակարգչային տեխնիկայով հագեցման լայնածավալ գործընթաց, բացվել է համալիր լաբորատորիա և ինտերնետ կապով ապահովված գիտական կաբինետ:

Ինստիտուտի նպատակն է հասնել բուհի համակարգչային հագեցվածության եվրոպական չափորոշիչներին՝ մեկ համակարգիչ 3-4 ուսանողի համար: Ներկայումս Ինստիտուտի համակարգչային ցանցը բաղկացած է 180 համակարգիչներից: Ինստիտուտն ունի նաև ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած լսարան, ուսումնական ինտերակտիվ միջոցների մեծ քանակություն:

Տեղեկատվական ոլորտի զարգացումն ուղղված է կրթության մատչելիության ապահովմանը և կրթության ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հետագա զարգացմանը:

Կրթության գործընթացի տեղեկատվական աջակցության կատարելագործման համար անհրաժեշտ է՝

- Ինստիտուտի տեղեկատվական ենթակառուցյունների ստեղծում, որոնք կապահովեն կրթության նոր որակ,
- կրթական ծրագրերին և գործընթացներին աջակցող էլեկտրոնային տեղեկատվական ուսումնամեթոդական նյութերի ստեղծում,

- տեղեկատվական համակարգի ստեղծում՝ Ինստիտուտի, քաղաքի, Հայաստանի և այլ երկրների մասշտաբով հասարակական խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներում ուսանողների մասնակցությունն ապահովելու նպատակով,
- ուսանողների համար կրթական և տեղեկատվական ինտերնետ-ռեսուրսների, այդ թվում նաև հեռավար ուսուցման ուսումնական ծրագրերի ստեղծում,
- հեռավար ուսուցման զարգացումն ապահովող պայմանների ստեղծում,
- կրթական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանն ուղղությամբ դասախոսների որակավորման բարձրացում:
- Ինստիտուտի կրթության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների արդիականացումը

6. ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պայմաններում շարունակվում է կատարելագործվել ուսանողի անձի՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու և հայրենասերի, մասնագիտական, ինտելեկտուալ և սոցիալական գործունեության ունակ ապագա մասնագետի կայացմանը, զարգացմանն ու ինքնադրսևորմանն ուղղված բարենպաստ պայմանների շարունակական ձևավորումը: Կրթական գործընթացում մեծ ուշադրություն է դարձվում անձի հոգևոր-բարոյական որակների զարգացմանը:

Դաստիարակության բովանդակության նպատակները խնդիրները, պայմանավորված են հասարակության պահանջներով, և կոչված են պահովելու մարդու անձի կայացումը՝ մարդասիրական արժեհամակարգի հիման վրա:

Կրթության նոր ուղղվածությունը կրում է գործնական բնույթ: Ուսանող երիտասարդության դաստիարակության համակարգը կառուցվում է շարունակական կրթության պահանջարկի ձևավորման և ստեղծագործական ունակությունների զարգացման հիման վրա :

Պետության սոցիալական պատվերը՝ կրթված, բարոյական, նախաձեռնող, ինքնուրույն որոշումներ կայացնող, համագործակցության և միջմշակութային

փոխգործունեությանն ընդունակ, երկրի ճակատագրի նկատմամբ պատասխանատվության զգացում ունեցող անձի դաստիարակումն է: Անձի ձևավորման, զարգացման և մասնագիտական կայացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, երեխայի դաստիարակության, կրթության և բազմակողմանի զարգացման, մայրենի լեզվի, մշակույթի, ազգային սովորույթների և ավանդույթների պահպանման, տեղեկացվածության, առողջ ապրելակերպի իրավունքի իրականացումը կրթության համակարգի գլխավոր խնդիրն է, ինչը արտահայտվում է նշված ոլորտի կարևորագույն փաստաթղթերում: Համակարգն ընդհանուր առմամբ ուղղված է ուսանողի՝ որպես ՀՀ քաղաքացու դաստիարակությանը և նրա սահմանադրական իրավունքների ապահովմանը: Առավել առաջնահերթ խնդիրներ են համարվում անհատական ինքնագարգացումը, հաջող ինքնադրսևորումը և ինքնակողմնորոշումը:

Ինստիտուտում ստեղծված և գործող դաստիարակչական համակարգերը հիմնված են շահագրգիռ կողմերի պահանջների վրա:

Ինստիտուտի սոցիալ-դաստիարակչական զարգացման ռազմավարության նպատակներն ու խնդիրներն են՝

- մշտական ուշադրությունն աճող սերնդի դաստիարակության խնդիրներին,
- ուսանողների գործունեության կազմակերպումը՝ ուղղված սեփական անձի կատարելագործմանը՝ որպես ուսուցման և դաստիարակության սուբյեկտի,
- դաստիարակվածության, կրթվածության, արհեստավարժության կարևորության բարձրացումը, համամարդկային արժեքների հաստատումն ու դաստիարակությունը,
- հայրենասիրության, մարդասիրության, մարդ-քաղաքացու որակների դաստիարակումը,
- աշխատասիրության, ինտերնացիոնալիզմի դաստիարակումը,
- ուսանողների ֆիզիկական զարգացման և առողջության բարելավումը,
- ընդհանուր քաղաքական և իրավական մշակույթի ձևավորումը,
- հասարակական-քաղաքական ակտիվության զարգացումը, քաղաքացիական հասունության ձևավորումը,

- հայրենասիրական և այլ ազգերի նկատմամբ հանդուրժողականության դաստիարակությունը,
- ապագա մասնագետների գենդերային հանդուրժողականության դաստիարակումը:

7. ԿԱՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի՝ անձնակազմի զարգացմանն ուղղված ինստիտուցիոնալ քաղաքականության կարևորագույն նպատակները և խնդիրներն են.

- կադրերի հստակ պլանավորումը,
- աշխատանքային հաջողությունների խթանման և խրախուսման միջոցների զարգացումը,
- շարունակական մասնագիտական աճի պայմանների ապահովումը,
- պարտականությունների և իրավունքների հստակ բաշխումը:

Գիտամանկավարժական կադրերի կազմավորումն իրականացվում է Ինստիտուտի մագիստրատուրայում և ասպիրանտուրայում, ՀՀ առաջատար գիտական կենտրոններում և հանրապետությունից դուրս (նպատակային ասպիրանտուրա և դոկտորանտուրա)՝ գիտության թեկնածուների, դոկտորների պատրաստման միջոցով:

Հաստիքային թափուր տեղերի համար աշխատակիցների ընտրության և ընդունելության ռազմավարությունները նպատակաուղղված են թափանցիկության և հավասարության սկզբունքներին, ինչն ապահովվում է պաշտոնում հրամանագրման ընթացակարգով, աշխատանքային համաձայնագրերի առկայությամբ, փորձաշրջանի գնահատմամբ: Դասախոսական կազմի ընդունելությունը կատարվում է մրցակցային հիմունքներով: Ինստիտուտի կայունության ապահովման նպատակով անհրաժեշտ է ստեղծել անձնակազմի կադրային ռեզերվ: Անձնակազմի իրավունքների և պարտականությունների սահմանների հստակ բաշխման քաղաքականությունն իրականացվում է կադրերի կառավարման համակարգի կառուցվածքի, կարգերի և պաշտոնի նկարագրերի բովանդակության միջոցով:

Ինստիտուտի ղեկավարությունը պարբերաբար միջոցներ է ձեռնարկում պրոֆեսորադասախոսական անձնակազմը գիտական աստիճաններ և կոչումներ ունեցող հաստիքային դասախոսներով համալրմանն ուղղությամբ:

Պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատակիցների մասնագիտական արհեստավարժության շարունակական բարձրացման նպատակով անհրաժեշտ է գործողության մեջ դնել այլ բուհեր և ակադեմիական ինստիտուտներ աշխատակիցներին գործուղելու պրակտիկան:

Կադրերի զարգացման ռազմավարության հիմնական նպատակները և խնդիրներն են՝

- պրոֆեսորադասախոսական կազմի համակարգված վերապատրաստումը,
- մագիստրատուրայի և դոկտորանտուրայի (PhD) ծրագրերի միջոցով գիտամանկավարժական կադրերի պատրաստման նոր մոդելի ներմուծումը,
- պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացի ուղղորդումը դեպի տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներմուծում:

8. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտում 2008թ.-ից գործում է կարիերայի կենտրոնը, որի գործառույթների մեջ են մտնում բազմակողմանի կապերի ձևավորումը գործատու կազմակերպությունների հետ, ինչպես նաև մեթոդական և կազմակերպչական աշխատանքները ուսանողների և շրջանավարտների հետ:

Գործատուների հետ համագործակցությունը նպատակները և խնդիրներն են՝

- աշխատաշուկային անհրաժեշտ բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստում,
- ուսանողների պրակտիկայի կազմակերպում,
- շրջանավարտներին աշխատանքի տեղավորում,
- մասնագետների վերապատրաստում, վերաորակավորում և որակավորման բարձրացում:

Այս ուղղությամբ զարգացման համալիր պլանի ամենաառաջնահերթ խնդիրներից մեկն է հանդիսանում սոցիալական համագործակցության աշխատանքը

գործատուների՝ տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային կրթության բաժնի, քաղաքի կրթական և այլ կազմակերպությունների հետ՝ պրակտիկաների անցկացման աջակցության և շրջանավարտների աշխատանքի տեղավորման նպատակով:

Աշխատանքի մատչելիության, տեղեկատվության թափանցիկության և հուսալիության մակարդակի բարձրացման համար մեծ ուշադրություն է դարձվում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների օգտագործմանը: Այդ նպատակով որոշում է կայացվել «ՎՊՄԻ շրջանավարտների աշխատանքի տեղավորման» վիրտուալ տվյալների բանկի ստեղծման վերաբերյալ:

Ներկայումս բավարար չափով զարգացած չեն Ինստիտուտի քաղաքականության հարցերում գործատուների մասնակցության անկախ ձևերն ու մեխանիզմները՝ այդ թվում նաև կրթության որակի անկախ փորձաքննության գործընթացներում: Որոշ մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունը ոչ միշտ է համապատասխանում գործատուների պահանջներին:: Էական նշանակություն ունի նաև մասնագետների պատրաստման երկարաժամկետ ռազմավարության ընտրությունը, որը հաշվի կառնի աշխատաշուկայում և կրթական ծառայությունների շուկայում կատարվող փոփոխությունները: Նման ռազմավարության հիմնավորված իրականացումը թույլ կտա Ինստիտուտին ժամանակին արձագանքել աշխատաշուկայի պահանջներին՝ կրթական ծրագրերում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու նպատակով: Կարևոր է նաև երկարաժամկետ գործընկերային հարաբերությունների հաստատումը տարբեր կազմակերպությունների հետ, ինչպես նաև աշխատաշուկայում շրջանավարտների դիրքը ապահովելու, ինչը դյուրին կդարձնի ըստ ստացած մասնագիտության աշխատանքի որոնումը:

Շրջանավարտների աջակցության համակարգի հիմնական նպատակներն և խնդիրներն են՝

- ձևավորել համագործակցության համակարգ Ինստիտուտի և գործատուների միջև ,
- ստեղծել «բուհ-գործատու» համագործակցության գործուն մեխանիզմներ,
- անցկացնել մշտադիտարկում՝ Լոռու մարզում կրթական ծառայությունների և աշխատաշուկայի ներկա իրավիճակի և զարգացման ուղղությամբ,

- համակարգել Ինստիտուտի ստորաբաժանումների գործունեությունը շրջանավարտներին աշխատանքի տեղավորման գործում,
- օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները թափուր աշխատատեղերի տվյալների բանկի նորացման և զարգացման, պրակտիկայի հենքի, մասնագետների հմտությունների և ունակությունների, պատրաստման որակի նկատմամբ գործատուների պահանջները բավարարելու նպատակով,
- անցկացնել համակարգված միջոցառումներ ուսանողների և շրջանավարտների հետ՝ ուղղված վերջիններիս մոտ պատասխանատվության, հաղորդակցման ունակությունների, ինքնաներկայացման հմտությունների զարգացմանը՝ հեռանկարային աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման նպատակով,
- համագործակցակցել աշխատանքի տեղավորման բուհական, մարզային և պետական ծառայությունների հետ՝ Ինստիտուտի ուսանողների կողմից աշխատանքի արդյունավետ որոնման նպատակով:

9. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի գրադարանային ֆոնդը կրկնապատկվել է: Այժմ իրականացվում են աշխատանքներ՝ էլեկտրոնային գրադարանի ստեղծման ուղղությամբ, բացվել է նոր՝ երկրորդ ընթերցասրահը:

Ինստիտուտի գրադարանը պատասխանատու է գիտական և կրթական գործընթացների համար: Գործունեության տարբեր ձևեր հենվում են ֆինանսական, կադրային և նյութատեխնիկական հնարավորությունների վրա, հաշվի են առնում ընթերցողների փոփոխվող պահանջները, տեղեկատվական ռեսուրսների տրամադրման նոր ձևերը և նրանց հետ աշխատանքի միջոցները:

Ներկայումս գրադարանն անցել է սպասարկման և ներմուծվող գրականության մշակման գործընթացների ավտոմատացմանը: Ստեղծվել Կատարվում են աշխատանքներ՝ տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման հենքի՝ ավանդական ծառայությունների զարգացման և սկզբունքորեն նոր ծառայությունների (էլեկտրոնային գրադարան) ստեղծման նպատակով:

Հետագա զարգացման արդի խնդիր է հանդիսանում ուսումնական գործընթացի և գրադարանային-տեղեկատվական սպասարկման ինտեգրումը, որը հնարավորություն կտա արդյունավետ օգտագործել Ինստիտուտում առկա տեղեկատվական ռեսուրսները:

Գրադարանից օգտվողների պահանջների մակարդակին համապատասխան էլեկտրոնային ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ է հետագա կապերի ամրապնդում Ինստիտուտի տեղեկատվական ծառայության հետ:

Գրադարանում իրականացվող անցումը էլեկտրոնային ծառայությունների պահանջում է սկզբունքորեն նոր մոտեցումներ՝ գրադարանային ֆոնդերի և էլեկտրոնային ռեսուրսների հուսալիության, անվտանգության և պահպանման բնագավառում:

Զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

- մշակել և ներդնել գրադարանից օգտվողների սպասարկման և ներմուծվող գրականության մշակման համակարգ,
- բարձրացնել գրադարանային-տեղեկատվական սպասարկման մակարդակը և հարմարեցնել սպասարկման ձևերը՝ համաձայն օգտվողների անընդհատ փոփոխվող պահանջների
- բարձրացնել գրադարանի դերը՝ որպես ուսումնական, գիտական և մշակութային-լուսավորական գործունեության տեղեկատվական ռեսուրսներ տրամադրողի,
- համալրել և պահպանել ավանդական գրադարանային ֆոնդերը և էլեկտրոնային ռեսուրսները,
- նպաստել ուսանողների, դասախոսների և Ինստիտուտի աշխատակիցների տեղեկատվական գրագիտության մակարդակի բարձրացմանը,
- աջակցել կրթական ռեսուրսների էլեկտրոնային գրադարանի հետագա զարգացմանը՝ որպես ուսումնական գործընթացի տեղեկատվական լիակատար ապահովման միջոց:

10. ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի վարչատնտեսական գործունեությունն ուղղված է շենքերի և կառույցների շահագործման, անվտանգության և երկարակեցության, ուսումնալաբորատոր և տնտեսական սարքավորումների, տարբեր մեխանիզմների տեխնիկական շահագործման ապահովմանը:

Վարչատնտեսական բաժնի կառուցվածքը և կադրային կազմը թույլ են տալիս անհրաժեշտ մակարդակով իրականացնել տվյալ ուղղությամբ աշխատանքները:

Նյութատեխնիկական բազայի զարգացումը պայմանավորված է կրթական բարեփոխումների պահանջներով և որակյալ մասնագետների պատրաստման գործում միջազգային չափորոշիչներով:

Ուսանողների ուսման, կացարանի և հանգստի, ինչպես նաև դասախոսների աշխատանքի անվտանգության և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը նախատեսվում է հիմնական ռազմավարական ծրագրով:

11. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի ֆինանսական վիճակը դինամիկ զարգացող և կայուն է, ինչը թույլ է տալիս ժամանակակից մակարդակով իրականացնել կրթական գործընթացը, ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական հենքը և զարգացնել Ինստիտուտի ուսումնանյութական հենքը, բարձրացնել դասախոսների և աշխատակիցների աշխատավարձերը՝ անընդհատ բարելավելով պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատակիցների սոցիալական ապահովվածությունը: